ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2025թվականի N 260-Ա

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԵՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՔԱՂԱՔԱՑՈՒ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 0.06ՀԱ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 29.12.2011թվականի թիվ 1920-Ն որոշումը, 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ մասը, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումը և Արենի համայնքի ավագանու 21.08.2025թվականի թիվ 113-Ա որոշումը, որոշում եմ՝

1. Արենի համայնքի Արենի բնակավայրի վարչական տարածքում գտնվող, Արթուր Սողոմոնի Սողոմոնյանին սեփականության իրավունքով պատկանող 0,06 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության (հողատեսքը՝ վարելահող, կադաստրային ծածկագիրը՝ 10-008-0265-0113) հողամասի նպատակային նշանակությունը փոխադրել բնակավայրերի հողերի կատեգորիա՝ բնակելի կառուցապատման գործառնական նշանակության:
2. Վերոնշյալ հողամասին տրամադրել հետևյալ հասցեն՝ ՀՀ ՎՁՄ, Արենի համայնք, գ. Արենի, Խաչիկի խճուղի, 2/1 հողամաս:
3. Առաջարկել հողի սեփականատեր Արթուր Սողոմոնյանին վճարելու հողամասի փոփոխության ընթացքում առաջացած կադաստրային արժեքների տարբերությունը, որը կազմում է 715 650 ՀՀ դրամ: Գումարը վճարվում է անկանխիկ եղանակով հետևյալ հաշվեհամարին՝ 900355105132:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հողամասի սեփականատիրոջ կողմից կադաստրային արժեքների տարբերությունը վճարելուց և վճարման անդորրագիրը ներկայացնելուց հետո:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2025թվականի N 261-Ա

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0,01182ՀԱ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՌԱՆՁԻՆ ՄԻԱՎՈՐ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով ՀՀ Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածը՝ որոշում եմ.

1. Արենի համայնքի Արենի բնակավայրի վարչական տարածքում գտնվող, Արենի համայնքին սեփականության իրավունքով պատկանող 0,01182 հա հողամասը (ծածկագիր՝ 10-008-0111-0001-ից, նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, հողատեսքը՝ այլ հողատեսք) գրանցել որպես առանձին միավոր համայնքային սեփականություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2025թվականի N 262-Ա

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՐԵՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 0,002ՀԱ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով Արենի համայնքի ավագանու 06.08.2025 թվականի թիվ 109-Ա որոշումը՝ որոշում եմ

Արենի համայնքի սեփականություն հանդիսացող, Արենի բնակավայրի վարչական տարածքում գտնվող 0,002հա բնակավայրերի նպատակային նշանակության հողամասը (ծածկագիրը՝ 10-008-0041-0042, գործառնական նշանակությունը՝ այլ հողերի, հասցեն՝ 17-րդ փողոց 1) ուղղակի վաճառքով, կադաստրային արժեքի 100%-ի չափով՝ 24420 ՀՀ դրամ արժեքով, օտարել <<Հայաստանի էլեկտրական ցանցեր>> ՓԲԸ-ին՝ Արենի բնակավայրում կառուցված մանկապարտեզի էլեկտրամատակարարումը պատշաճ իրականացնելու և նոր ենթակայան տեղադրելու նպատակով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2025թվականի N 263-Ա

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 22.08.2025 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 243-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Վարչարարական հիմունքների և Վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 47 հոդվածի 1-ին մասի ա) կետով և հիմք ընդունելով հանձնաժողովի 19.09.2025 թվականի թիվ 3 արձանագրությունը, ՀՀ Կադաստրի կոմիտեի ստացականը, Ա.Կարապետյանի կողմից ծանուցումը ստանալու վերաբերյալ փոստային առաքանիի կողմից ծանուցագրի ստացման հավաստող փաստաթուղթը չներկայացնելու հանգամանքը. որոշում եմ՝

1. Արենի համայնքի ղեկավարի կողմից 22.08.2025 թվականին, Արենի համայնքի Արենի բնակավայրի բնակիչ Արգամ Աղասիի Կարապետյանի կողմից ինքնակամ շինություն կառուցելու համար թիվ 243-Ա որոշմամբ հարուցված վարչական վարույթի ժամկետը երկարաձգել 10 օր ժամկետով՝ գործի քննության համար էական համարվող հանգամանքները պարզելու նպատակով:
2. Հանձնարարել աշխատակազմի քարտուղարին՝ որոշման մասին սահմանված կարգով ծանուցել վարույթի մասնակիցներին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2025թվականի N 264-Ա

«ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԳԱՐԱԿԱՁՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ «ԱՐԵՎԻԿ»ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի մարտի 26-ի՝ «Համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների տնօրենի թափուր պաշտոն զբաղեցնելու մրցույթի նախապատրաստման, անցկացման և արդյունքների ամփոփման» N 02-Ն հրամանով հաստատված կարգի 1-ին կետը.

1. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի «Արենի համայնքի Ագարակաձոր բնակավայրի «Արևիկ» մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար 2025 թվականի հոկտեմբերի 28-ին, ժամը 11:00-ին, անցկացնել մրցույթ:

2. Հաստատել սույն որոշման 1-ին կետում նշված մրցույթի մասին հայտարարության տեքստը՝ համաձայն հավելվածի:

3. Աշխատակազմի քարտուղար Գևորգ Սիմոնյանին՝ սահմանված կարգով ապահովել մրցույթներիի մասին հայտարարությունների հրապարակումը, մրցույթների նախապատրաստման և անցկացման աշխատանքների իրականացումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2025թվականի N 265-Ա

ՏԱՐԵՑՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐՎԱՆ ԸՆԴԱՌԱՋ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ 100 ՏԱՐԻՆ ԲՈԼՈՐԱԾ 2 ԲՆԱԿԻՉՆԵՐԻՆ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի, 48-րդ հոդվածի պահանջներով և հիմք ընդունելով Վայոց Ձորի մարզպետի 22.09.2025 թվականի թիվ 01/07-2/5697-2025 գրությունը՝ Արենի համայնքի ղեկավարը որոշում է.

1. Արենի համայնքի 100 տարին բոլորած 2 բնակիչներին՝ Խաչանուշ Արամի Մովսիսյանին (ծնված 01.07.1921 թվականին, Արփի բնակավայր) և Անազ Հովակիմի Նավասարդյանին (ծնված 01.07.1922 թվականին, Ագարակաձոր բնակավայր) տարեցների միջազգային օրվան ընդառաջ հատկացնել 50 000-ական ՀՀ դրամ գումար:

2. Գումարները հատկացնել վարչական ղեկավարներին՝ տարեցներին փոխանցելու նպատակով:

3. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել համայնքապետարանի սոցիալական աշխատող Կարինե Մանուկյանին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2025թվականի N 266-Ա

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԱՎՆԱՁՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՅՈՒՐԻԿ ԱՐԱՐԱՏԻ ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ 0,072ՀԱ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 29.12.2005թ. N 2387-Ն որոշումը, ***որոշում եմ.***

Արենի համայնքի Աղավնաձոր բնակավայրի վարչական տարածքում գտնվող, Յուրիկ Արարատի Հակոբջանյանին սեփականության իրավունքով պատկանող 0,072հա բնակավայրերի նշանակության հողամասը (ծածկագիրը՝ 10-006-0022-0095, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման) վերահասցեավորել ՀՀ Վայոց ձորի մարզ, Արենի, գյուղ Աղավնաձոր 38-րդ փողոց, 8 հողամաս, նախկինում տրամադրված Արենի գյուղ Աղավնաձոր 5-րդ փողոց, 2-րդ փակուղի թիվ 3 հասցեի փոխարեն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2025թվականի N 267-Ա

ԱՐԵՆԻԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՎ ՎԱՐԴԱՆ ՋԱԼԱԼԻ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻ ՄԻՋԵՎ ԿՆՔՎԱԾ 0,36454 ՀԱ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Քաղաքացիական օրենսգրքի» 466-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 101-րդ հոդվածի 4-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով Վարդան Համբարձումյանի դիմումը՝ որոշում եմ.

Լուծել Արենիի համայնքապետարանի և Վարդան Ջալալի Համբարձումյանի միջև 28.07.2023թվականին կնքված 0,36454հա (ծածկագիրը՝ 10-008-0178-0016, վկայականի համարը՝ 02082023-10-0010) գյուղատնտեսական նշանակության հողամասի վարձակալության պայմանագիրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2025թվականի N 268-Ա

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԱՎՆԱՁՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՋԻՎԱՆ ՍՏԵՓԱՆԻ ԱԼԱՎԵՐԴՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ 0,06535ՀԱ ԵՎ 0,08871ՀԱ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՄԻԱՎՈՐՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՌԱՋԱՑԱԾ 0,15406ՀԱ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 29.12.2005թ. N 2387-Ն որոշումը, որոշում եմ.

Արենի համայնքի Աղավնաձոր բնակավայրի վարչական տարածքում գտնվող, Ջիվան Ստեփանի Ալավերդյանին սեփականության իրավունքով պատկանող բնակավայրերի նպատակային նշանակության 0,06535 հա (ծածկագիրը՝ 10-006-0091-0011, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման, հասցեն՝ Արենի, գ. Աղավնաձոր 31-րդ փողոց 2/1 հողամաս) և 0,08871 հա (ծածկագիրը՝ 10-006-0091-0010, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման, հասցեն՝ Արենի, գ. Աղավնաձոր 31-րդ փողոց 2 հողամաս) հողամասերի միավորման ընթացքում առաջացած 0,15406հա հողամասին տրամադրել հետևյալ հասցեն՝ ՀՀ Վայոց ձորի մարզ, Արենի համայնք, գ. Աղավնաձոր 31-րդ փողոց 2 հողամաս:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2025թվականի N 269-Ա

ԱՐԵՆԻԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՎ ՄԱՆՎԵԼ ԽԱՉԻԿԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ՄԻՋԵՎ ԿՆՔՎԱԾ 0,11345 ՀԱ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Քաղաքացիական օրենսգրքի» 466-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 101-րդ հոդվածի 4-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով Մանվել Գրիգորյանի դիմումը՝ որոշում եմ.

Լուծել Արենիի համայնքապետարանի և Մանվել Խաչիկի Գրիգորյանի միջև 26.12.2019թվականին կնքված 0,11345հա (ծածկագիրը՝ 10-037-0124-0011, վկայականի համարը՝ 08012020-10-0003) գյուղատնտեսական նշանակության հողամասի վարձակալության պայմանագիրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2025թվականի N 270-Ա

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԵՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԱՎԻՍ ԳՐԻԳՈՐԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ 0,17044ՀԱ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ԲԱԺԱՆՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՌԱՋԱՑԱԾ ԹՎՈՎ 4 ՀՈՂԱՄԱՍԵՐԻՆ ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 29.12.2005թ. N 2387-Ն որոշումը, որոշում եմ.

Արենի համայնքի Արենի բնակավայրի վարչական տարածքում գտնվող, Ավիս Գրիգորի Գրիգորյանին սեփականության իրավունքով պատկանող բնակավայրերի նպատակային նշանակության 0,17044 հա (ծածկագիրը՝ 10-008-0017-0019, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման) հողամասի բաժանման ընթացքում առաջացած թվով 4 հողամասերին տրամադրել հետևյալ հասցեները՝

1. 0,025հա հողամասին՝ (հատված 4) ՀՀ Վայոց ձորի մարզ, Արենի համայնք, գ. Արենի 32-րդ փողոց 11 հողամաս:

2. 0,025հա հողամասին՝ (հատված 3) ՀՀ Վայոց ձորի մարզ, Արենի համայնք, գ. Արենի 32-րդ փողոց 11/1 հողամաս:

3. 0,08044հա հողամասին՝ (հատված 2) ՀՀ Վայոց ձորի մարզ, Արենի համայնք, գ. Արենի 32-րդ փողոց 11/2 հողամաս:

4. 0,04հա հողամասին՝ (հատված 1) ՀՀ Վայոց ձորի մարզ, Արենի համայնք, գ. Արենի 32-րդ փողոց 11/3 հողամաս:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2025թվականի N 271-Ա

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԵՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԻՐ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՐԳԱՄ ԱՂԱՍԻԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՏՈՒԳԱՆՔ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Վարչական ակտով լուծվող հարցի նկարագրությունը

Արենի համայնքի ղեկավարը քննության առնելով վարչական գործը այն է՝ Արենի համայնքի Արենի բնակավայրի վարչական տարածքում Արգամ Աղասիի Կարապետյանի կողմից ինքնակամ շինություն կառուցելու վերաբերյալ վարչական իրավախախտման հարցը պարզեց որ.

Արգամ Աղասիի Կարապետյանը (բնակության հասցե՝ Արենի համայնք գ. Արենի 29փ., տ. 1) Երևան-Մեղրի Մ2 միջպետական ավտոճանապարհի 107-րդ կմ-ի աջակողմյան հատվածում Արենի համայնքի Արենի բնակավայրի վարչական տարածքում գտնվող իրեն սեփականության իրավունքով պատկանող 10-008-0111-0021 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նշանակության հողատարածքում և հողատարածքին կից համայնքի սեփականություն հանդիսացող տարածքում խախտելով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ>> Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերով սահմանված պահանջները, առանց համապատասխան քաղաքաշինական փաստաթղթերի իրականացրել է ապօրինի շինություն՝ կառուցվել է բետոնյա 2 հենասյուն և տեղադրել գովազդային վահանակ: Հենասյուներից մեկը կառուցվել է իր սեփական տարածքում, որի համար օրենքով սահմանված կարգով նախատեսված է տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով, իսկ մյուսը համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության հողատարածքում, որի համար օրենքով սահմանված կարգով նախատեսված է տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկից

երկուհազարհինգհարյուրապատիկի չափով, ինչի կապակցությամբ Արենի համայնքի ղեկավարի 22 օգոստոսի 2025 թվականի թիվ 234-Ա կարգադրությամբ ստեղծված հանձնաժողովի ստուգման ակտի և տեղում կատարված ուսումնասիրության արձանագրության հիման վրա 2025 թվականի օգոստոսի 22-ին թիվ 243-Ա որոշմամբ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածով սահմանված կարգով, Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 154-րդ հոդվածի պահանջների խախտման փաստով Արենիի համայնքապետարանում հարուցվել է վարչական վարույթ և Արենի համայնքի Արենի բնակավայրի վարչական տարածքում Արգամ Կարապետյանի կողմից ինքնակամ շինություն կառուցելու համար վարչական վարույթի լսումները իրականացնելու նպատակով ստեղծված ժամանակավոր հանձնաժողովը հրավիրել և անցկացրել է լսում: Ա.Կարապետյանը նախապես պատշաճ ծանուցվել է:

Վարչական ակտն ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը

1. Արենի համայնքի ղեկավարի 22 օգոստոսի 2025 թվականի թիվ 234-Ա կարգադրությամբ ստեղծված ժամանակավոր հանձնաժողովի ստուգման ակտը և տեղում կատարված ուսումնասիրության արձանագրությունը և լուսանկարները:
2. Արենի համայնքի Արենի բնակավայրի վարչական տարածքում գտնվող Արգամ Կարապետյանին սեփականության իրավունքով պատկանող և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի վրա ինքնակամ կառուցված շինության վարչական վարույթի հանձնաժողովի 25.08.2025 թվականի թիվ 1 , 12.09.2025թ. թիվ 2, 19. 09.2025 թվականի թիվ 3 և 29.09.2025թվականի թիվ 4 արձանագրությունները:
3. Լիցենզավորված կազմակերպության ներկայացուցչի կողմից տրված փորձագիտական եզրակացությունը:
4. Ա.Կարապետյանի և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի սեփականության իրավունքի վկայականները:

Վարչարարության կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները և հիմք ընդունելով վերոհիշյալ փաստերը հաստատված եմ համարում հետևյալը՝

Արենի համայնքի գ. Արենի 29 Փ., 1 տան բնակիչ Արգամ Կարապետյանի կողմից իր սեփական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերում առանց համապատասխան քաղաքաշինական փաստաթղթերի ինքնակամ կառուցել է բետոնյա հենասյուներ, որոնց վրա տեղադրվել է գովազդային վահանակ և կառուցված շինությունների նկատմամբ չկա ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ձևակերպված որևէ իրավունք: Համայնքի սեփականություն հանդիսացող հողամասում տեղադրված հենասյունը փաստացի օգտագործվում է ապօրինի, քանի որ ապօրինի շինությամբ ծանրաբեռնված հողամասի նկատմամբ չկա ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ձևակերպված որևէ իրավունք:

Նշված փաստական հանգամանքները հաշվի առնելով 2025 թվականի օգոստոսի 22-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետի հիմքով, Արենիի համայնքապետարանում հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2025թ-ի օգոստոսի 25-ին հրավիրվել է լսում,

որին մանսակցելու նպատակով պատշաճ ծանուցվել է /հիմք՝ փոստային առաքման կտրոն և օգոստոսի 22-ին Ա. Կարապետյանի հողատարածքում կատարած ստուգայցի շրջնակներում կատարված բանավոր ծանուցումը/ Արգամ Աղասիի Կարապետյանը: Նույն վարույթի շրջանակներում կատարվել է նաև լիցենզավորված կազմակերպության կողմից չափագրում, տեղում 12.02.2025 թվականին կազմվել է արձանագրություն, որից հետո 19.09.2025թվականին հրավիրվել է լսում և քանի որ Ա. Կարապետյանին ուղարկված փոստային առաքանիի հետ վերադարձի կտրոնը դեռևս համայնքապետարանը չէր ստացել և Ա. Կարապետյանին պատշաճ ծանուցման փաստը առկա չէ, ուստի հանձնաժողովի համապատասխան արձանագրության հիմքով և համայնքի ղեկավարի 19.09.2025թվականի թիվ 263-Ա որոշմամբ վարաչական վարույթի ժամկետը երկարաձգվել է 10 օրով և հերթական նիստ է հրավիրվել 2025թվականի սեպտեմբերի 29-ին ժամը 15:00-ին::

Սույն գործի շրջանակներում ստեղծված ժամանակավոր հանձնաժողովի կողմից վարչական վարույթի գործով ներկայացված բոլոր նյութերը նախապատրաստվել, ուսումնասիրվել և ներկայացվել են համայնքի ղեկավարին. Վարչական ակտն ընդունելու հիմնավորումները:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 8-րդ կետի՝ համայնքի ղեկավարը կանխարգելում և կասեցնում է ինքնակամ շինարարությունը և օրենքով սահմանված կարգով ապահովում է դրանց հետևանքների վերացումը:

Հայաստանի Հանրապետության «Քաղաքացիական օրենսգրքի» 188-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ ինքնակամ կառույց է համարվում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով այդ նպատակի համար չհատկացված հողամասում կամ առանց թույլտվության կամ թույլտվությամբ սահմանված պայմանների կամ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով կառուցված կամ վերակառուցված շենքը,շինությունը կամ այլ կառույցը:

Նույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն ՝ Ինքնակամ կառույցը չի կարող ճանաչվել օրինական և ենթակա է քանդման (ապամոնտաժման): Նման կառույցի քանդման (ապամոնտաժման) կարգը և ժամկետները սահմանվում են ՀՀ օրենսդրությամբ:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հողամասի սեփականատերն իրավունք ունի քանդելու իր հողամասում գտնվող ինքնակամ կառույցը:

Չօրինականացված ինքնակամ կառույցը պետության, համայնքի կամ այլ շահագրգիռ անձի հայցով, որի իրավունքները և օրենքով պահպանվող շահերը խախտվել են ենթակա է քանդման, իսկ հողամասը նախկին վիճակի վերականգնման՝ հողամասի սեփականատիրոջ հաշվին:

«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» կետի համաձայն՝ կառուցապատողները պարտավոր են կառուցապատումն իրականացնել օրենքով սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան, շինարարության թույլտվության հիման վրա:

Նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ շինարարության թույլտվությունը փաստաթուղթ է, որը հաստատում է կառուցապատողի իրավունքը՝ իրականացնել որոշակի շինարարական գործունեություն ինչպես նոր կառուցապատվող կամ վերակառուցվող տարածքում, այնպես էլ գոյություն ունեցող շենքերում և շինություններում: Շինարարության թույլտվությունը համայնքներում տալիս է համայնքի ղեկավարը՝ ՀՀ Կառավարության կողմից սահմանված կարգով:

Տվյալ պարագայում Արգամ Կարապետյանը (բնակության հասցեն՝ Արենի համայնք գ. Արենի 29Փ., տ.1) Արենի համայնքի Արենի բնակավայրի 36-րդ փողոց, 4-րդ փակուղի թիվ 1 հասցեում գտնվող իր սեփական հողամասում և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության հողամասում առանց համապատասխան քաղաքաշինական փաստաթղթերի /շինարարության թույլտվության/ և հողօգտագործման իրավունքի իրականցրել է ապօրինի ինքնակամ կառույցի շինարարություն:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Սեփականության կամ հողօգտագործման իրավունք ունեցող անձի կողմից այդ հողամասի վրա, ինչպես նաև անհատական բնակելի տներում կամ ստորաբաժանված կամ բազմաբնակարան շենքերում կամ շենքերին կից, օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով այդ նպատակի համար չհատկացված հողամասում կամ առանց թույլտվության կամ թույլտվությամբ սահմանված պայմանների կամ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով շենք, շինություն կամ այլ կառույց կառուցելը կամ վերակառուցելը կամ տեղադրելը կամ առանց թույլտվության շինարարություն կամ տեղադրման թույլտվություն պահանջող շինարարական աշխատանքներ կամ առանց թույլտվության քանդում կամ ապամոնտաժում իրականացնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից հազարապատիկի չափով:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Սույն հոդվածի 1-ին մասում նշված արարքները գյուղական բնակավայրերում իրականացնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված արարքներից որևէ մեկը պետությանը, համայնքներին, ֆիզիկական կամ իրավաբանական անձանց սեփականության իրավունքով պատկանող հողամասերի վրա կատարելը հողօգտագործման իրավունք չունեցող անձի կողմից՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկից երկուհազարհինգհարյուրապատիկի չափով:

Ելնելով վերոգրյալներից և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 26-րդ կետով, 42-րդ հոդվածի առաջին մասի 8-րդ կետով, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի

154-րդ հոդվածի առաջին, երկրորդ և երրորդ մասերի, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, ՀՀ «Հողային օրենսգրքի» 4-րդ հոդվածով, 44-րդ հոդվածով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» կետով և 23-րդ հոդվածի 1-ին մասով և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով՝ որոշում եմ.

1. Արգամ Աղասիի Կարապետյանի նկատմամբ նշանակել տուգանք 100 000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ գումարի չափով՝ Արենի համայնքի Արենի բնակավայրի 36-րդ փողոց 4-րդ փակուղի թիվ 1 հասցեում գտնվող, իր սեփական հողամասում ինքնակամ շինություն կառուցելու համար:
2. Արգամ Աղասիի Կարապետյանի նկատմամբ նշանակել տուգանք 2000000 (երկու միլիոն) ՀՀ դրամ գումարի չափով՝ Արենի համայնքի Արենի բնակավայրի համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում ինքնակամ շինություն կառուցելու համար:
3. Սույն որոշմամաբ նշանակված տուգանքի վճարման հաշվեհամարն է՝ 900355105066:
4. Որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողության ապահովումը հանձնարարել Արենիի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին:
5. Սույն որոշումը կարող է դատական կարգով բողոքարկվել ՀՀ վարչական դատարան «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 70-րդ և ՀՀ «Վարչական դատավարության» օրենսգրքի 73-րդ հոդվածներով նախատեսված կարգով դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:
6. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության միջոցով անբողոքարկելի դառնալուց հետո:
7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կողմերին իրազեկելուն հաջորդող օրվանից կամ սույն որոշմամբ ուղղակիորեն շոշափող անձանց վերաբերյալ տեղեկություններ հայտնի չլինելու դեպքում հրապարակման պահից azdarar.am կայքի և /կամ համայնքապետարանի տեղեկագրերում հրապարակելու միջոցով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2025թվականի N 272-Ա

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԵՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻ ՎՐԱ ԱՐԳԱՄ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲԵՏՈՆՅԱ ՀԵՆԱՍՅՈՒՆԸ ԱՊԱՄՈՆՏԱԺԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ԱԶԱՏԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Վարչական ակտով լուծվող հարցի նկարագրությունը Արենի համայնքի Արենի բնակավայրի վարչական տարածքում Երևան- մեղրի Մ2 միջպետական ավտոճանապարհի 107-րդ կմ-ի աջակողմյան հատվածում համայնքային սեփականություն հանդիսացող հողատարածքի վրա Արենի համայնքի Արենի բնակավայրի բնակիչ Արգամ Կարապետյանի կողմից առանց հողօգտագործման իրավունքի, ապօրինի կառուցվել է բետոնյա հենասյուն և տեղադրվել է գովազդային վահանակ, որով ծանրաբեռնվել է համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը:

Համաձայն «Վարչարարության և Վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի բ) կետի՝ Արենի համայնքի ղեկավարի 22.08.2025 թվականի թիվ 243-Ա որոշմամբ հարուցվել է վարչական վարույթ:
Վարչական վարույթի լսումների և վարույթի փուլում իրականացված փորձագիտական չափագրման արդյունքում պարզ է դարձել, որ Ա.Կարապետյանի կողմից գովազդային վահանակ տեղադրելու նպատակով կառուցված բետոնյա հենասյուներից մեկը գտնվում է համայնքային սեփականություն հանդիսացող տարածքում:

2. Վարչական ակտն ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

Վարչական գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում՝ ձեռքբերված ապացույցներով, վարչական մարմինը հաստատված

է համարում հետևյալը՝

ա. Արենի համայնքի Արենի բնակավայրում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող հողատարածքում առանց հողօգտագործման իրավունքի և առանց համապատասխան թույլտվության, իրականացվել են շինության շինարարական

աշխատանքներ՝ կառուցվել է բետոնյա հենասյուն, իսկ դրանով ծանրաբեռնված հողամասը փաստացի օգտագործվում է ապօրինի, քանի որ այդ հողամասի նկատմամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ձևակերպված է Արենի համայնքի սեփականության իրավունքը (հիմք՝ ՀՀ անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վկայական՝ N 19092025-10-0007).

բ. Վերոնշյալ ինքնակամ շինությամբ փաստացի ծանրաբեռնված է Արենի համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 0,01182հա հողամասը, ուստի անհրաժեշտություն է առաջացել ազատել հիշյալ հողամասը՝ դրանով ծանրաբեռնված ինքնակամ շինությունից.

3. Վարչական ակտն ընդունելու հիմնավորումը.

Համաձայն քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 1-ին մասի՝ ինքնակամ կառույց է համարվում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով այդ նպատակի համար չհատկացված հողամասում կամ առանց թույլտվության կամ թույլտվությամբ սահմանված պայմանների կամ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով կառուցված կամ վերակառուցված կամ տեղադրված շենքը, շինությունը կամ այլ կառույցը, իսկ 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ ինքնակամ կառույցը չի կարող ճանաչվել օրինական և ենթակա է քանդման (ապամոնտաժման): Նման կառույցի քանդման (ապամոնտաժման) կարգը և ժամկետները սահմանվում են Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հողամասի սեփականատերը, այդ թվում՝ ինքնակամ կառույցի առկայությամբ հողամասը ձեռք բերողը, կրում է դրա վրա գտնվող ինքնակամ կառույցի օգտագործման ու ինքնակամ կառույցի քանդման (ապամոնտաժման) հետ կապված ռիսկերը: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հողամասի սեփականատերն իրավունք ունի քանդելու իր հողամասում գտնվող ինքնակամ կառույցը՝ առանց դատարան դիմելու: Պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում գտնվող ինքնակամ կառույցի քանդման (ապամոնտաժման) մասին որոշում կայացնում են օրենքով սահմանված իրավասու մարմինները: Ուրիշի հողամասում գտնվող ինքնակամ կառույցը պետության, համայնքի կամ այլ շահագրգիռ անձի հայցով, որի իրավունքները և օրենքով պահպանվող շահերը խախտվել են, ենթակա է քանդման (ապամոնտաժման), իսկ հողամասը՝ նախկին վիճակի վերականգնման՝ հողամասի սեփականատիրոջ հաշվին: Ուրիշի հողամասում ինքնակամ կառույց իրականացրած անձը պարտավոր է հատուցել հողամասի սեփականատիրոջը հասցրած վնասը, ներառյալ՝ ինքնակամ կառույցի քանդման (ապամոնտաժման) և հողամասի նախկին վիճակի վերականգնման ծախսերը: Վերը նշված հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ ինքնակամ կառույցների առկայությամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքի գրանցման առանձնահատկությունները կարգավորվում են գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին օրենքով և դրա հիման վրա ընդունված այլ իրավական ակտերով: Ինքնակամ կառույցները չեն կարող ճանաչվել օրինական, և դրանք ենթակա են քանդման, եթե կառուցված են Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված են քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և առաջացնում են հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման 2-րդ կետով սահմանված է, որ օրինականացման ենթակա չեն այն ինքնակամ կառույցները՝

ա. որոնց պահպանումը խախտում է այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ է սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը.

բ. որոնք կառուցված են հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված են քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և առաջացնում են հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք: Նույն որոշմամբ հաստատված կարգի 44-րդ կետով սահմանված է, որ սույն կարգով նախատեսված ինքնակամ կառույցների օրինականացումը մերժվում է համապատասխան որոշմամբ, եթե դրանք չեն բավարարում քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով և սույն կարգով սահմանված օրինականացման պայմանները:

Համաձայն ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման հավելվածի 33-րդ կետի՝ համայնքի ղեկավարը սեփական նախաձեռնությամբ ընդունում է որոշում պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերում գտնվող ինքնակամ կառույցներն օրինականացնելու կամ քանդելու մասին: Համաձայն հողային օրենսգրքի 44-րդ հոդվածի, քաղաքացիների ու իրավաբանական անձանց հողամասերի նկատմամբ սեփականության և այլ գույքային իրավունքներն իրենց հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունք է՝ օրենքով նախատեսված սահմանափակումների ու այլ պայմանների պահպանմամբ և հողամասերի նկատմամբ քաղաքացիների և իրավաբանական անձանց սեփականության իրավունքը ծագում է պետական ու համայնքային հողերի մասնավորեցման, ժառանգման, առքուվաճառքի, նվիրատվության և հողի հետ կապված այլ գործարքների ու իրավաբանական փաստերի հիման վրա:

Համաձայն «Քաղաքաշինության մասին» օրենքի 26-րդ հոդվածի 5-րդ մասի՝ համայնքների տարածքներում համայնքի ղեկավարը վերահսկում է կառուցապատողներին տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքների, բնակավայրերի քաղաքաշինական կանոնադրության պահանջների կատարումը, հողերի և ամրակայված գույքի քաղաքաշինական նպատակային օգտագործումը, ինչպես նաև կանխարգելում, կասեցնում է ինքնակամ շինարարության դեպքերը և օրենքով սահմանված կարգով ապահովում է դրանց հետևանքների վերացումը:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, համայնքի ղեկավարը որպես պարտադիր լիազորություն, կանխարգելում ու կասեցնում է ինքնակամ շինարարությունը և օրենքով սահմանված կարգով ապահովում է դրանց հետևանքների վերացումը, ընդունում է համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում ինքնակամ կառույցի քանդման (ապամոնտաժման) մասին որոշում և իր լիազորությունների շրջանակներում օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովում է ինքնակամ կառույցի քանդման (ապամոնտաժման) մասին որոշման կատարումը.

Համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի՝ եթե վարչական վարույթ հարուցելուց հետո վարչական մարմնի տրամադրության տակ առկա են համապատասխան վարչական ակտն ընդունելու համար անհրաժեշտ փաստաթղթերը, բավարար չափով պարզաբանված և ճշգրտված են տվյալ գործի հանգամանքները, ապա վարչական մարմինը պարտավոր է վարչական ակտն ընդունել նշված հանգամանքների ի հայտ գալուց հետո՝ ողջամիտ ժամկետում՝ չսպասելով ընդհանուր կամ հատուկ ժամկետի լրանալուն: Արենի համայնքի ղեկավարի կողմից 22.08.2025 թվականի թիվ 243-Ա որոշմամբ հարուցված վարչական վարույթի ընթացքում բավարար չափով պարզաբանված և ճշգրտված ապացույցների, փաստարկների և փաստաթղթերի առկայությունը հիմք է տալիս վարչական ակտի ընդունման անհրաժեշտությանը:

Համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 60-րդ հոդվածի 1-ին մասի՝ գրավոր վարչական ակտն ուժի մեջ է մտնում այդ ակտի ընդունման մասին՝ նույն օրենքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից, եթե օրենքով կամ այդ ակտով այլ բան նախատեսված չէ:

Հաշվի առնելով վերը նշված փաստական ու իրավական հիմնավորումները և հարուցված վարչական վարույթի ընթացքում ձեռք բերված ապացույցները, հիմք ընդունելով ՀՀ Հողային օրենսգրքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի, 44-րդ հոդվածի 2-րդ մասի, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 5-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի և 9-րդ հոդվածի 2-րդ մասի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ, 36-րդ, 38-րդ, 58-րդ և 60-րդ հոդվածների դրույթները, ինչպես նաև ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման պահանջները, 22.08.2025 թվականի թիվ 243-Ա որոշմամբ հարուցված վարչական վարույթի գործի քննության ընթացքում կազմված վարչական վարույթի հանձնաժողովի 25.08.2025 թվականի թիվ 1 , 12.09.2025թ. թիվ 2, 19. 09.2025 թվականի թիվ 3 և 29.09.2025թվականի թիվ 4 արձանագրությունները. որոշում եմ՝

1. Չօրինականացնել Արենի համայնքի Արենի բնակավայրում, Արգամ Կարապետյանի սեփական հողամասին կից գտնվող, համայնքային սեփականության հողատարածքի վրա առանց հողօգտագործման իրավունքի կառուցված շինությունը /բետոնյա հենապյունը/ :

2. Հանձնարարել Արենի համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Միեր Ասատրյանին, համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ /աշխատակազմի քաղաքաշինության, գործնեության պատասխանատու/ Սմբատ Սարգսյանին, համայնքի ղեկավարի օգնական Գագիկ Հովսեփյանին և հասարակական կարգի պահպանության ծառայության օժանդակությամբ քանդել (ապամոնտաժել) Արենի համայնքի Արենի բնակավայրի 36-րդ փողոց 4-րդ փակուղի թիվ 1 հասցեին կից, առանց հողօգտագործման իրավունքի, համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում Արգամ Կարապետյանի կողմից ինքնակամ կառուցված շինությունն ու անօրինական տիրապետումից ազատել համայնքային սեփականություն հանդիսացող 10-008-0111-0024 կադաստրային ծածկագրով 0,01182հա գյուղատնտեսական նպատակային նշանակության հողամասը:

3. Առաջարկել Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության համայնքային ոստիկանության գլխավոր վարչության Եղեգնաձորի բաժնի պետին՝ սույն որոշման 2-րդ կետի համաձայն՝ Արենիի համայնքապետարանի կողմից վարչական հարկադրանքի միջոցներ կիրառելու ընթացքում, համապատասխան վայրում ապահովել հասարակական կարգի պահպանումը:

4. Սույն որոշման պահանջների կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Արենի համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Միեր Ասատրյանի վրա:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

7. Որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Արենի համայնքի ղեկավարին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

8. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Արենի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2025թվականի N 273-Ա

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՓԻ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԿՈՏՐՎԱԾ ՉՈՐԱՑԱԾ ՈՒՌԵՆՈՒ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ԷՏ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով Արենի համայնքի ավագանու 16.11.2018թ. թիվ 108-Ա որոշման 2-րդ կետը և Արենի համայնքի «Արենի համայնքի տարածքում ապօրինի ծառահատումները կանխարգելելու և սանիտարական էտը կանոնակարգելու նպատակով ստեղծված հանձնաժողովի» 19.09.2025թ. թիվ 01 նիստի արձանագրությունը, որոշում եմ.

1. Թույլատրել Արենի համայնքի Արփի բնակավայրում Գագիկ Ավետյանին սեփականության իրավունքով պատկանող ջրովի վարելահողին կից գտնվող կոտրված, չորացած ուռենու մնացած մասի նկատմամբ իրականացնել սանիտարական էտման /հատման/ աշխատանքներ՝ վտանգի վերացման, գյուղատնտեսական աշխատանքների կատարման և տարածքի բարեկարգման նպատակով:

2. Առաջարկել Գ. Ավետյանին վճարելու 1 խմ-ի դիմացլ տասներկու հազար ՀՀ դրամ՝ առավելագույնը 3 խմ ծավալով:

3. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել առաջատար մասնագետ Վարդան Թովմասյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2025թվականի N 274-Ա

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԵՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՎԱՐԴԱՆ ՋԱԼԱԼԻ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՎԱՐՁԱԿԱԼԱԾ 0,36454 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԸ ԱԼԻԿ ՎԱԶԳԵՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ ԵՆԹԱՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Քաղաքացիական օրենսգրքի» 620-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 94-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի պահանջներով, հիմք ընդունելով 28.07.2023թ. կնքված վարձակալության պայմանագիրը, Վարդան Համբարձումյանի և Ալիկ Վարդանյանի դիմումները՝ որոշում եմ.

Արենի համայնքի Արենի բնակավայրի վարչական տարածքում գտնվող, Վարդան Ջալալի Համբարձումյանի կողմից 28.07.2023 թ.-ին վարձակալած 0,36454հա հողամասը (ծածկագիրը՝ 10-008-0178-0016 վկայական՝ N 02082023-10-0010) ենթավարձակալությամբ հատկացնել Ալիկ Վազգենի Վարդանյանին:

Ենթավարձակալության ավարտը՝ 28.07.2048թ:

Տարեկան վարձավճարը սահմանել 10 000 ՀՀ դրամ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2025թվականի N 275-Ա

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԵՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՔԱՋԻԿ ՎԱԼԵՐԻԱՅԻ ՍՈՒՔԻԱՍՅԱՆԻՆ ՀԱՄԱՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ 0,012977ՀԱ ԵՎ 0,005286ՀԱ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՑԱԾՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԵՐԸ ԱՎԵԼԻ ԲԱՐՁՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԵՐԻ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 17.09.2009թ. N1066-Ն, 29.04.2021թվականի թիվ 698-Ն որոշումները և քաղաքացու դիմումը՝ ***որոշում եմ.***

Արենի համայնքի Արենի բնակավայրի վարչական տարածքում գտնվող, Քաջիկ Վալերիայի Սուքիասյանին, Արմինե Երջանիկի Սիմոնյանին, Գայանե Քաջիկի Սուքիասյանին և Վալերիկ Քաջիկի Սուքիասյանին համասեփականության իրավունքով պատկանող 0,005286հա և 0,012977 հա գյուղատնտեսական նշանակության (հողատեսքը՝ այլ հողատեսք) ցածրարժեք հողատեսքերը փոխադրել ավելի բարձրարժեք հողատեսքերի՝ վարելահող՝ կադաստրային քարտեզներում հայտնաբերված սխալը ուղղելու նպատակով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2025թվականի N 276-Ա

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՌԱՆՁԻՆ ՄԻԱՎՈՐ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով ՀՀ Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածը՝ որոշում եմ.

1. Արենի համայնքի Արենի բնակավայրի վարչական տարածքում գտնվող, Արենի համայնքին սեփականության իրավունքով պատկանող 0,06254 հա հողամասը (ծածկագիր՝ 10-008-0154-0171-ից, նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, հողատեսքը՝ արոտավայր) գրանցել որպես առանձին միավոր համայնքային սեփականություն:

2. Արենի համայնքի Արենի բնակավայրի վարչական տարածքում գտնվող, Արենի համայնքին սեփականության իրավունքով պատկանող 0,05534 հա հողամասը (ծածկագիր՝ 10-008-0154-0171-ից, նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, հողատեսքը՝ արոտավայր) գրանցել որպես առանձին միավոր համայնքային սեփականություն:

3. Արենի համայնքի Արենի բնակավայրի վարչական տարածքում գտնվող, Արենի համայնքին սեփականության իրավունքով պատկանող 0,06268 հա հողամասը (ծածկագիր՝ 10-008-0154-0171-ից, նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, հողատեսքը՝ արոտավայր) գրանցել որպես առանձին միավոր համայնքային սեփականություն:

4. Արենի համայնքի Արենի բնակավայրի վարչական տարածքում գտնվող, Արենի համայնքին սեփականության իրավունքով պատկանող 0,05159 հա հողամասը (ծածկագիր՝ 10-008-0154-0171-ից, նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական,

հողատեսքը՝ արոտավայր) գրանցել որպես առանձին միավոր համայնքային սեփականություն:

5. Արենի համայնքի Ռինդ բնակավայրի վարչական տարածքում գտնվող, Արենի համայնքին սեփականության իրավունքով պատկանող 0,47268 հա հողամասը (ծածկագիր՝ 10-037-0125-0001-ից, նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, հողատեսքը՝ վարելահող) գրանցել որպես առանձին միավոր համայնքային սեփականություն:

6. Արենի համայնքի Ագարակաձոր բնակավայրի վարչական տարածքում գտնվող, Արենի համայնքին սեփականության իրավունքով պատկանող 0,25495 հա հողամասը (ծածկագիր՝ 10-004-0178-0001-ից, նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, հողատեսքը՝ այլ հողատեսք) գրանցել որպես առանձին միավոր համայնքային սեփականություն:

7. Արենի համայնքի Արենի բնակավայրի վարչական տարածքում գտնվող, Արենի համայնքին սեփականության իրավունքով պատկանող 0,25617 հա հողամասը (ծածկագիր՝ 10-008-0112-0001-ից, նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, հողատեսքը՝ արոտավայր) գրանցել որպես առանձին միավոր համայնքային սեփականություն:

8. Արենի համայնքի Արենի բնակավայրի վարչական տարածքում գտնվող, Արենի համայնքին սեփականության իրավունքով պատկանող 0,64013 հա հողամասը (ծածկագիր՝ 10-008-0112-0001-ից, նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, հողատեսքը՝ արոտավայր) գրանցել որպես առանձին միավոր համայնքային սեփականություն:

9. Արենի համայնքի Արենի բնակավայրի վարչական տարածքում գտնվող, Արենի համայնքին սեփականության իրավունքով պատկանող 0,4444 հա հողամասը (ծածկագիր՝ 10-008-0112-0001-ից, նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, հողատեսքը՝ արոտավայր) գրանցել որպես առանձին միավոր համայնքային սեփականություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2025թվականի N 277-Ա

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԵՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 0.16130ՀԱ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԱՌԿԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 29.12.2011թվականի թիվ 1920-Ն որոշումը, ՀՀ կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ մասը, 16.12.2021թ.-ի Հայաստանի Հանրապետության ՀՕ 397-Ն օրենքի 2-րդ հոդվածը, ՀՀ կառավարության 05.01.2022թվականի թիվ 14-Ն որոշումը, ՀՀ Վայոց ձորի մարզպետի 06.10.2025թվականի թիվ 01/06.2/6082-2025 գրությամբ ներկայացված լիազոր մարմինների դրական եզրակացությունները որոշում եմ՝

Արենի համայնքի Արենի բնակավայրի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 0.16130հա բնակավայրերի նպատակային նշանակության (ծածկագիրը՝ 10-008-0017-, գործառնական նշանակությունը՝ այլ հողերի) հողամասի գործառնական նշանակությունը փոխադրել հասարակական կառուցապատման գործառնական նշանակության:

Արենի համայնքի Արենի բնակավայրի վարչական տարածքում գտնվող (ծածկագիր՝ 10-008-0017, հողամասի չափը՝ 0.16130 հա, նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման) Արենի համայնքին սեփականության իրավունքով պատկանող հողամասի վրա ինքնակամ կառուցված հասարակական նպատակային նշանակության շինությունները՝ 84,84քմ՝ (տեխնիկական սենյակ՝ 7,26քմ., ավտոլվացման կետ՝ ծածկ՝ 76,78քմ., սանհանգույց՝ 0,8քմ.) համարել Արենի համայնքի սեփականություն և այն ճանաչել օրինական (կցվում է շինությունների և հողամասի հատակագիծը):

Ինքնակամ կառույցը օրենքով սահմանված կարգով հաշվառված է ՀՀ կադաստրի կոմիտեի էլեկտրոնային բազայում: Հաշվառման կոդ՝ 2024UQPHEZ:

Առաջարկել Արենի համայնքի ավագանուն սույն որոշման 2-րդ կետում նշված օրինականացված հասարակական նշանակության շինությունները՝

84,84քմ. և 0.16130 հա մակերեսով հողամասը գնման նախապատվության իրավունքով, ուղղակի վաճառքով ձեռք բերելու առաջարկ կատարել կառույցն իրականացրած Ստեփան Արսենի Սարգսյանին և առաջարկել նրան.

1) վճարելու 1ք.մ.՝ 10881 ՀՀ դրամ ինքնակամ կառուցված 84,84 քմ հասարակական նշանակության շինությունների համար՝ ընդամենը 923 144 ՀՀ դրամ հաշվի առնելով «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (ՀՕ-225-Ն) 4-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ և 5-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետերով սահմանված շինության տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտիականության գործակիցը և 2020 թվականի հունիսի 4-ի N 1023-Ն որոշմամբ սահմանված տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտիականության սահմանները:

2) վճարելու 0.16130հա բնակավայրերի նշանակության հողամասի արժեքը՝ 5 494 061 ՀՀ դրամ, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 18.05.2006թվականի թիվ 912-Ն որոշմամբ սահմանված կարգի 33.1 կետի բ/ ենթակետը և 33.2 կետը:

3) վճարելու համայնքի անվամբ գույքային իրավունքների պետական գրանցման համար իրականացված վճարները՝ վճարման անդորրագրերի հիման վրա:

5. Ինքնակամ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ինչպես նաև չեն գտնվում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա,

6. Ավագանու որոշման ընդունման օրվանից, ինքնակամ կառույցն իրականացրած անձի կողմից 15 աշխատանքային օրվա ընթացքում նախատեսված գնման նախապատվության առաջարկը չընդունվելու, կամ գնման նախապատվության առաջարկն ընդունելուց հետո 30-օրյա ժամկետում օրինականացված կառույցների և դրանց սպասարկման համար սահմանված կարգով առանձնացված հողամասի վաճառքի գները չվճարելու դեպքում, նշված կառույցները և դրանց սպասարկման համար անհրաժեշտ 0.16130հա հողամասը կվաճառվի աճուրդով՝ <<Հրապարակային սակարկությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

7. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել ուժի մեջ մտնելու օրվանից վեց ամսվա ընթացքում, կամ դատական կարգով երկամսյա ժամկետում:

8. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2025թվականի N 278-Ա

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԵՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՆԱՐԻՐԻ ՄԱՔՍԻՄԻ ՍԻՄՈՆՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 0,102 ՀԱ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՑԱԾՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԸ ԱՎԵԼԻ ԲԱՐՁՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԻ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 17.09.2009թ. N1066-Ն որոշումը և Ն.Սիմոնյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

Արենի համայնքի Արենի բնակավայրի վարչական տարածքում գտնվող, Նարիրի Մաքսիմի Սիմոնյանին սեփականության իրավունքով պատկանող 0,102 հա գյուղատնտեսական նշանակության (ծածկագիրը՝ 10-008-0212-0029, հողատեսքը՝ վարելահող) ցածրարժեք հողատեսքը փոխադրել ավելի բարձրարժեք հողատեսքի՝ բազմամյա տնկարկ, խաղողի այգի գործառնական նշանակության:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2025թվականի N 279-Ա

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԵՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՆԱՐԻՐԻ ՄԱՔՍԻՄԻ ՍԻՄՈՆՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 0,199 ՀԱ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՑԱԾՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԸ ԱՎԵԼԻ ԲԱՐՁՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԻ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 17.09.2009թ. N1066-Ն որոշումը և Ն.Սիմոնյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

Արենի համայնքի Արենի բնակավայրի վարչական տարածքում գտնվող, Նարիրի Մաքսիմի Սիմոնյանին սեփականության իրավունքով պատկանող 0,199 հա գյուղատնտեսական նշանակության (ծածկագիրը՝ 10-008-0212-0031, հողատեսքը՝ վարելահող) ցածրարժեք հողատեսքը փոխադրել ավելի բարձրարժեք հողատեսքի՝ բազմամյա տնկարկ, խաղողի այգի գործառնական նշանակության:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2025թվականի N 280-Ա

2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 11-ԻՆ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՓԻ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԹՎՈՎ 10 ՏԱՂԱՎԱՐՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՀՅՈՒՐԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՄԱՐ ՄԻԱՆՎԱԳ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով Արենի համայնքի ավագանու 14.08.2024 թվականի թիվ 123-Ա որոշումը՝ ***որոշում եմ.***

Արենի համայնքի Արփի բնակավայրում ս/թ հոկտեմբերի 11-ին կազմակերպվող տոնական միջոցառման շրջանակներում Արփի բնակավայրի թվով 10 տաղավարների ձևավորման և հյուրասիրության կազմակերպման համար հատկացնել 40.000-ական ՀՀ դրամ գումար յուրաքանչյուր սեղանին՝ այն անկանխիկ եղանակով փոխանցելով սույն որոշման հավելվածում նշված անձանց՝ որպես ներկայացուցիչների:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

Հավելված

Արենի համայնքի ղեկավարի

07.10.2025թ. թիվ 280-Ա որոշման

ՑՈՒՑԱԿ

Միանվագ գումարի հատկացման

	Անուն , հայրանուն,ազգանուն	Անձնագրի տվյալներ	հաշվեհամար	Գումարի չափ
1	Հովսեփյան Էդվարդ Ջանիկի	009893215	220022713543000	40000
2	Օհանյան Աննա Դավիթի	018363515	24113016047600	40000
3	Մանուկյան Վիգեն Կնյազի	AU0543204	24100068835805	40000
4	Հարությունյան Ալետա Պարգևի	013269261	220021033059000	40000
5	Հարությունյան Վահրամ Փյունիկի	AM0294375	163008082436	40000
6	Համբարձումյան Մարինե Գուրգենի	AR0674302	1570090344530100	40000
7	Վարդանյան Հերմինե Համլիկի	AV0666546	24100392211901	40000
8	Ալավերդյան Վարդուհի Կյուդվիգի	013577986	24100440741701	40000
9	Համբարձումյան Ռուզաննա Վարդանի	012656047	24100068831708	40000
10	Մկրտչյան Լիանա Վաղինակի	AR0236209	220022150936000	40000

Աշխատակազմի քարտուղար՝ Գ. Սիմոնյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2025թվականի N 281-Ա

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԵՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԱՎԵՏԻՔ ԲԱՅԱՆԴՈՒՐԻ ԱՍԱՏՐՅԱՆԻՆ ՀԱՄԱՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ 0,26605ՀԱ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ԲԱԺԱՆՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՌԱՋԱՑԱԾ ԹՎՈՎ 2 ՀՈՂԱՄԱՍԵՐԻՆ ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 29.12.2005թ. N 2387-Ն որոշումը, որոշում եմ.

Արենի համայնքի Արենի բնակավայրի վարչական տարածքում գտնվող, Ավետիք Բայանդուրի Ասատրյանին, Պերճանուշ Վազգենի Զաքարյանին և Անի Ավետիքի Ասատրյանին համասեփականության իրավունքով պատկանող բնակավայրերի նպատակային նշանակության 0,26605 հա (ծածկագիրը՝ 10-008-0002-0009, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման) հողամասի բաժանման ընթացքում առաջացած թվով 2 հողամասերին տրամադրել հետևյալ հասցեները՝

1. 0,14266հա հողամասին՝ ՀՀ Վայոց ձորի մարզ, Արենի համայնք, գ. Արենի 26-րդ փողոց 10 բնակելի տուն:

2. 0,12339հա հողամասին՝ ՀՀ Վայոց ձորի մարզ, Արենի համայնք, գ. Արենի 26-րդ փողոց 10/1 հողամաս:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**